

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵՆԻ Ի ՄԵՌԵԼՈՑ:

Շնորհաւորելով ընթերցողներին Յիսուսի սուրբ Յարութիւնը, «Արարատը» կը արեմաղթէ Հայերին բարոյական յարու-
թեան նոր գարուն: Երանի թէ գար հասնէր Հայերիս այն սուրբ
օրը, երբ մենք ուխտ կապէինք մեր Փրկչի հետ համայնարութիւն
առնելու, մենք, որ կարծես թաղված ենք չարութեան, թշնա-
մութեան, վրէժխնդրութեան, արծաթսիրութեան, խաբեա-
յութեան, անարգարութեան, անվարեկցութեան, ապերախտու-
թեան, պատուամոլութեան, ինքնահաւանութեան, խորաման-
կութեան, կեղծաւորութեան, անմաքրութեան եւ ուրիշ ա-
րատների անդնդային գերեզմանի մէջ: Պատուական Հայեր,
մտածող Հայեր, եթէ կայ ժամանակ մեզ յարութիւն առնելու,
արդէն իսկ է. որովհետեւ բաղդաւորված ենք ազգովին, այս
տասնեւիններորդ մարդավարի եւ լուսաւորված դարումն, ու-
նենալու, Ս. Գրիգորի Գահի վերայ, գերեզմանիս առաջ դրված
դարեւոր թշուառութեամբ ծանրացած վէմի բարի եւ իմաս-
տուն թաւալեցնողը, որ որոշած է իւր կեանքը զոհել հայկեան
ազգի բարոյական փրկութեան նուիրական գործին, որի մասին
բարձրաձայն պիտի աղաղակեն, դարերն յաւիտեան, քարերն
անգամ — Ս. Էջմիածնի վեհաշէն Գէորգեան ձեմարանը:

Ուրեմն ով որ անսուտ եւ անխաբ եւ անկեղծ Հայ է, թող
իւր եսականութիւնը, իւր անձնասիրութիւնը, իւր բոլոր անձ-
նական կիրքերը խաչած լինի Գողգոթայից բոլոր մարդկութիւնը

դէպի Թշուառութեան կապանքներից ազատութիւն հրաւիրող
պատուիրանի համաձայն, եւ բոլորանուիրաբար խմբվելով Վե-
հափառ աղգաշէն Հայրապետիս շուրջ եւ աջակից լինելով հայ-
կական ազգի վեհավայր Սիօնի մեծագործ Գահակալին, դէպի
յառաջ վարենք աղգային բարոյական եւ մտաւորական վերա-
կենդանութեան առաքինի գործը, որով համայարութիւն պիտի
առնենք մեր քաղցրագոյն Փրկչի հետ եւ Գողգոթայի վերայ
մարդկային ազգը լոյսին եւ ճշմարտութեան ժառանգորդ անե-
լու համար թափված կենսատու արիւնով պիտի փրկվինք ար-
ժան եւ իրաւ: